Աջակցություն ստացեք We Are TB-ից:

Ցանկացած ոք կարող է ձեռք բերել տուբերկուլյոզ (TB): ***We Are TB-ն այստեղ է՝ օգնելու ձեզ:***

Խոսեք որևէ մեկի հետ, ով հասկանում է:

We Are TB-ի ([վի ար թիԲի]՝ «Մենք ենք տուբերկուլյոզը») կամավորները եղել են այն վիճակում, որում հիմա Դուք եք և այստեղ են, որպեսզի աջակցեն Ձեզ ախտորոշման և բուժման ընթացքում՝ անցնելու պայքարի, հաղթանակների և վախերի միջով:

Բուժման ընթացքում և դրանից հետո ***We Are TB-ի*** անդամները կարող են ծառայել որպես շահերն առաջ տանող՝ բարձրացնելով տուբերկուլյոզի մասին իրազեկությունը և պատմելով իրենց անձնական պատմությունը, որպեսզի կրթեն և նվազեցնեն տուբերկուլյոզի խարանը:

Եկե'ք խոսենք:

Այցելեք հիվանդների աջակցության էջ՝ պարզեու, թե ինչպես՝ **www.wearetb.com/patient-support**

We Are TB-ն Facebook-ում, Instagram-ում, and Twitter-ում է:

Ես ունեմ տուբերկուլյզի թեստի դրական պատասխան: Ի՞նչ անեմ հիմա:

Հավելյալ տեղեկություններ՝

Տուբերկուլյոզի (TB) մասին լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերեք Հիվանդությունների Վերահսկման և Կանխարգելման Կենտրոններից (CDC)՝ **www.cdc.gov/tb/default.htm:**

CTCA
CALIFORNIA TUBERCULOSIS CONTROLLERS ASSOCIATION

Այս ուղեցույցը ստեղծվել է «Կալիֆորնիայի տուբերկուլյոզի դեմ պայքարողների միության» կողմից: Հավելյալ տեղեկությունների համար այցելեք **www.ctca.org:**

Ի՞նչ է տուբերկուլյոզը:

- Տուբերկուլյոզը (TB) մանրէ է: Տուբերկուլյոզի մանրէները կարող են Ձեզ ծանր հիվանդացնել:
- Եթե Դուք ձեռք եք բերում տուբերկուլյոզ, սովորաբար այն վնասում է թոքերը և դժվարացնում է շնչելը:
- Եթե դեղամիջոց չընդունեք, տուբերկուլյոզը կարող է Ձեզ սպանել:
- Տուբերկուլյոզը կարող է լինել կամ **ակտիվ** կամ **ոչ ակտիվ** (կոչվում է նաև «քնած» տուբերկուլյոզ):



Ինչո՞ւ ես պիտի դեղեր ընդունեմ, եթե հիվանդ չեմ զգում:

- Շատ ավելի դժվար է բուժել տուբերկուլյոզը, երբ այն ակտիվ է:
- Դուք կարող եք հենց հիմա հիվանդ չզգալ, բայց տուբերկուլյոզը կարող է ցանկացած պահի դառնալ ակտիվ և Ձեզ ծանր հիվանդացնել:
- Մինչև հիվանդ զգալը դեղեր ընդունելը կարող է օգնել պաշտպանել Ձեր ընտանիքն ու ընկերներին տուբերկուլյոզ ձեռք բերելուց:

Ինչպե՞ս եմ ես ձեռք բերել տուբերկուլյոզ:

- Ցանկացած ոք կարող է ձեռք բերել տուբերկուլյոզ:
- Դուք ներս եք շնչել տուբերկուլյոզի մանրէները, երբ գտնվել եք ակտիվ տուբերկուլյոզ ունեցող որևէ մեկի կողքին:



Լավ նորությունն այն է, որ՝...

- Կան դեղեր, որոնք բուժում են տուբերկուլյոզը նախքան Դուք կհիվանդանաք:

Իմ տուբերկուլյոզի թեստի պատասխանը դրական է եկել: Ի՞նչ է սա նշանակում:

- Սա նշանակում է, որ Դուք ունեք տուբերկուլյոզի մանրէներ Ձեր մարմնում:
- Հաջորդը Դուք պետք է որոշ թեստեր և ռենտգեն հետազոտություն (x-ray) անեք, որպեսզի իմանաք ավելին:



«Ակտիվ տուբերկուլյոզը» նշանակում է՝...

- Դուք հիվանդանում եք և սովորաբար ունենում եք հազ և ջերմություն, որը չի անցնում: Դուք կարող եք նաև ունենալ գիշերային քրտնարտադրություն և քաշի կորուստ:
- Դուք կարող եք տուբերկուլյոզը փոխանցել Ձեր ընտանիքին կամ ընկերներին և Ձեզ մոտ գտնվող այլ մարդկանց:
- Եթե Դուք դեղեր չընդունեք, կշարունակեք ավելի վատանալ:

«Ոչ ակտիվ (քնած) տուբերկուլյոզը» նշանակում է՝...

- Դուք հիվանդ չեք զգում:
- Դուք չեք կարող մանրէները փոխանցել Ձեր ընտանիքին կամ ընկերներին և Ձեզ մոտ գտնվող այլ մարդկանց:
- Դուք կարող եք դեղեր ընդունել, որպեսզի չհիվանդանաք և մանրէները չփոխանցեք որևէ մեկին:

Ոչ ակտիվ (քնած) տուբերկուլյոզը կարող է ցանկացած պահի վերածվել ակտիվ տուբերկուլյոզի:



(Armenian)